ԱԿՈՒԻՍԿՐԱՆԱ ԿԱՄ ԷՍԼԱՇԱԲԷԼ ՔԱՂԱՔԻ

ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՄԷՋ ՊԱՀՈՒԱԾ ՀԻՆԱԿԱՒՈՐ ՆՇԽԱՐՔՆ

Թարգմանեալ 'ի Journal de Rome օրագրէ։

Ամենուն ծանօթ է Մեծն կարոլոս անուանի կայսրն, պաշտպան եկեղեցւոյ և բարերար կաթողիկէ աշխարհի և վերանորոգող եւրոպական ազգաց։ Իր աշխարհաշէն մեծագործութեանց մէջ ալ մասնաւոր կերպով յիշատակաց արժանի են Ակուիսկրանա կամ հիմա Էսլաշաբէլ ասացեալ քաղքին շինուածքներն՝ զոր իրեն մայրաքաղաք ընտրած էր, և պատերազմներէն ետև հոն գայր հանգչելու՝ գեղեցիկ յիշատակարաններով զայն զարդարելով, որոց մէջ երևելի է այն միակ գանձն բոլոր աշխարհի մէջ ուր պահուին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և իւր ամենասուրբ Մօրն և այլ սրբոց նշխարքն։

Այս քաղքիս մէջ ուր Գերմանիոյ կայսերք գային պակուելու, ինքն չինել տուաւ Տիրամօր ընծայեալ մատուռն, որ հռոմէական ճարտարապետութեան գոհար մի կարէ համարիլ իր ճոխութեամբն, և որոյ շինութիւնն ութ տարուան մէջ աւարտեցաւ, 796էն 804. որ որչափ ճոխ է արուեստի մասին՝ նոյնչափ և ևս առաւել հոն հաւաքուած կրօնական յիշատակարանաց կողմանէ՝ որ իրենց սրբազան հրնութեամբն ամենեցուն պատկառելի են։ Ինքն իւր անշուք և անզարդ գերեզմանն ալ նոյն եկեղեցւոյն մէջ չինել տուաւ, ուր իր սրբայական փառաց անվայել բան չէր համարեր բազմաթիւ դպրաց և վիճակաւորաց հետ Աստուծոյ փառաբանութիւններն երգելու։ Եկեղեցւոյն գանձարանին մէջ պահուած սուրբ նշխարքն են

Ա. Հանդերձ Սրբոյ կուսին Մարիամու Աստուածածնի.

Բ. Խանձարուրք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Գ. Վարշամանկն՝ յորում ամփոփեցաւ գլուխն հատեալ Ս. Յովհաննու Մկրտչի.

Դ. Կտաւն միոյց Յիսուսի Քրիստոսի 'ի ժամ խաչելութեանն։

Այս պատուական նշխարաց հարազատութեան վերայ ամենևին տարակոյս չկայ, որովհետև ամենայն քննութեամբ հաստատեալ է նոցա վաւերականութիւնն. և որոց վկայ են դիւանք, արձանագրութիւնք, աւանդութիւն, գծագրութիւնք, անընդհատ ուխտաւորք ականատեսք մետասան դարերէ 'ի վեր, որք ամենքն ալ մի մի հաստատութիւն են սրբազան գանձուն։— Ինքն իսկ կարոլոս հիմնադիր եկեղեցւոյս՝ այսպէս խօսի արքունի քարտիսի մէջ. «Այս հռչակաւոր եկեղեցիս և այս մեծաշէն գործս չինել տուած ժամանակ, ոչ միայն ըստ իմոց ըղձից՝ այլ և շնորհօքն Աստուծոյ, հաւաքեցի 'ի նմա բազում նշխարս առաքելոց, մարտիրոսաց, խոստովանողաց և կուսանաց, հեռաւոր երկիրներէ զնոսին բերելով, մանաւանդ 'ի Յունաստանէ, և եդի զնոսա այս սուրբ տեղս, որպէս զի բարեխօսութեամբ նոցա կայսրութիւնն հաստատուի, և մեզաց թողութիւն լիցի»։

digitised by A.R.A.R.@

Այս սուրբ Նշխարքս ընկալաւ կարո-
ղաս 'ի զանազան կողմանց. յԵրուսա-
զեմէ 'ի ձեռն Յոհաննու պատրիարքի,
'ի Կոստանդնուպօլսոյ 'ի կայսերաց ժա-
մանակին, 'ի Պարսից ձեռամբ Հա-
ղուն — էլ — Ռաշիտ Հագարացւոց ամի-
րապետին, որոյ իշխանութեան ներքև
էր Նոյն ատեն Պաղեստինու աշխարհն։
Այս ամէն թագաւորք և իշխանաւորք՝
իւր բարեկամութիւնն չահիլ կանային՝
որ իր ժամանակին ամենէն հզօր ինք-
նակալն լինելուն, և գիտելով իւր սե-
ռին զոր ունէր կրօնական գանձուց՝
նուիրէին իրեն այս սուրբ Նշխարքս,
որ աստուածային տեսչութեամբ ան-
ցանէին յարևելից յարևմուտս, իրենց
հետ բերելով զօրհնութիւնս և զշնորհս
երկնից։

Փրանկական տարեգրոց մէջ որոշ
յիշատակի թէ յամին 799 Երուսաղ-
մայ պատրիարքն վանական մի ղրկեց
իբրև նուիրակ 'ի Գերմանիա՝ որ «զա-
նազան Նշխարս բերաւ ընդ իւր՝ Ցեառն
մերոյ յարութեան տեղէն»։

Եկինհարտ՝ կարդալոս կայսեր ատե-
նագրիրն ալ՝ որ նորա վարքն գրեց՝
յիշատակէ այս հրեշտակութիւնս, և
պատմէ թէ նոյն տարին՝ Երինէ կայս-
րուհւոյն ժամանակ հասան այս նուի-
րակներս յԱկուիսկրանա, և ետ դար-
ձած ժամանակն կայսրն իւր Զաքարիա
անուամբ մատրանապետն նոցա ուղ-
կից տուաւ, և մեծագումար դրամ
ղրկեց օգնութիւն քրիստոնէից՝ որ
սարակինոսաց լուծին ներքև հեծէին։

Այսու արևելեան քրիստոնեայք ալ
իրենց մեծ բարերար ճանաչէին զկա-
ղրոս, և 800ին երբ Զաքարիա դար-
ձաւ յԱկուիսկրանա՝ Երկու միան-
ձունք ալ նորա հետ եկին, բերելով
կայսեր՝ Սուրբ Գերեզմանին, Գողգո-
թայի, Զիթենեաց լերին և շրջապատին
փականքն, հանդերձ մեծագին դրօշա-
կով մի։ Այսպէս այս սուրբ տեղերս՝
իրենց մէջ եղած գանձերով՝ կարդալոս
մեծին տրուեցան յամի 800, Հարուն
ամիրապետին հաստատութեամբն, որ
յառաջագոյն ալ շատ ընծաներ ու-
ղարկել էր իրեն՝ զանազան դեսպաններ
ղրկելով։

Ինքն ընկալաւ նաև բազում Նշխարս
'ի Կոստանդնուպօլսոյ՝ զորս կայսերք
Յունաց իրեն նուիրէին՝ իւր բարեկա-
մութիւնը չահելու համար. յորս էին
Եռինէ թագուհին՝ որ սակաւ մի ևս մե-
ծին կարդալոսի հետ պիտի ամուսնանար,
և կայսերքն Նիկեփորոս Լոգոթէթ, Մի-
քայէլ Կիւրապաղատ և Լևոն հայկ-
ազն, որք շատ կրօնական յիշատակ-
ներ ղրկեցին իրեն և Նշխարս 'ի Պա-
ղեստինոյ, յԱրևելից, յԱփրիկոյ և 'ի
Սպանիոյ. զորս և ընծայեց կարդալոս
զանազան եպիսկոպոսական աթոռոց՝
զորս ինքն հիմնել էր. և սակայն նոցա
զլեսորներն պահեց Ակուիսկրանայի
Տիրամօր եկեղեցւոյն արքունի մատ-
ռան մէջ։

Ի սոցանէ սուրբ Նշխարանաց աւան-
դական կարգին մէջ առաջինն է կու-
սամօր զգեստն։— Երբայեցւոց մէջ ա-
ռանց և կանանց զգեստ էր՝ մարմնոյն
վերայ հագուելու պատմուճան մի հան-
դերձ գօտւով, վերարկու, սանդալք ո-
տից, և խոյրի նման գլխարկ։ Ակուիս-
կրանա պահուած Սրբոյ կուսին պատ-
մուճանն ներսէն մարմնոյն վերայ հագ-
նելիքն էր, որ շապիկ կամ ներքնակ
կոչէր. նիւթն արևելեան բեհեզէ հիւ-
սած է՝ զոր աւելի աղնուականք հագ-
նէին, մանաւանդ յեգիպտոս, որ
շատ տեսակներու բաժնուէր։ Ա-
ստուածամօր զգեստին տեսակն ամենէն
հասարակն է, գոյնն գեղնագոյն ճեր-
մակ և սեղանի անձեռոցի պէս քառա-
կուսի քառակուսի հիւսուած։

Պարանոցն անցընելու բացուածքն՝
բարակ բանուածքով օձապտոյտ մի շի-
նուած է, նմանապէս զգեստին վարի
դին եղած երկու ճեղքերուն շուրջն,
բայց սոցա ձևն վերինէն տարբեր է։
Թևերն երկայն եղած երևին, և ձախ
թևին մի մասն կտրած է. իսկ աջ թե-
ւին և կուրծքին վերայ դեղնորակ ճեր-
մակ բծեր տեսնուին՝ որ երևի թէ
կուսամօր կաթին կաթիլներն են։—
Երբ Տիրամօր զգեստն ժողովրդեան

digitised by A.R.A.R.@

ցոյց տան՝ ծալքն քակեն՝ այնպէս որ լայնքն ու երկայնքն ամբողջ երևի. իսկ միւս երեք նշխարքն միշտ ծալած ցուցանեն ու ժապաւինով կապած են։

Հինգերորդ դարէն 'ի վեր աւանդութիւն մի կայ՝ թէ Կուսամայրն Յեփեսոս մեռած չէ, այլ Յերուսաղէմ, (ըստ ոմանց) հնգետասան տարի իր Միածնէն ետև։ Ըստ Նիկեփորայ Կալիստոսի՝ երբ մեռնելու մօտ էր՝ ապպրեց սիրելոյ աշակերտին՝ (որ Փրկչին յանձնարարութեան համեմատ զինքն խընամէր), որ իւր զգեստներն երկու դրացի կանանց տայ՝ զորս ինքն շատ սիրէր իրենց առաքինութեանց և պարկեշտութեանն համար։ — Շատ տարիներ անցնելէն ետև, յամի 451 այս զգեստուցմին գտնուեցաւ Գալիլիոյ գիւղի մի մէջ բարեպաշտ հրեայ կնոջ մի քով։ Կալբիոս և Կանդիդոս անուանմբ երկու ուխտաւորք՝ որ յարիսական աղանդէ դարձած էին յուղղափառութիւն, յԵրուսաղէմ ուխտի ելին. և լսեցին այն կնոջէն՝ որ այն զգեստն իր ընտանեաց մէջ պահուէր որպէս անդին գանձ մի, որովհետև սուրբ և պաշտելի կուսանի մի պատմուճանն էր. գանձս փակուած էր գզրոցի մի մէջ և պահուէր նոյն կընոջ տան ետի դին առանձին սենեկի մի մէջ. ուր երբ մտին՝ տեսին բազմութիւն հիւանդաց՝ որ գզրոցին առջև 'ի ծունր իջեալ՝ իրենց առողջութիւն խնդրէին։ Կալբիոս և Կանդիդոս գիշերն 'ի բուն նոյն սենեկին մէջ անցընելով՝ գզրոցին չափն առին, և ինչ փայտէ շինուած լինելն իմացան և թէ ինչպէս ներկած էր. իրենց միտքն այն էր որ գողնան և քրիստոնէից ձեռքն հասցընեն։ Այս բանիս համար ելին յԵրուսաղէմ գնացին, և հոն չնեղ տուին գզրոց մի յար և նման առաջնոյն զոր տեսել էին. և սուրբ տեղեաց ուխտն կատարելով՝ գարձան նորէն այն հրեայ կնոջ տունն։ Եւ առանց դժուարութեան սուսիկ փուսիկ նոր շինուած տապանակն այն տեղը դնելով՝ հինն վերուցին, և կնոջն ալ ծանրագին պարգևներ տալով դարձան 'ի Կոստանդնուպօլիս։ Առաջ կամէին իրենց սեպհականել այն գանձն, սակայն եղած հրաշիւք՝ ստիպուեցան յայտնելու զայն, և բոլոր եղածն ծանուցին Լիւսն կայսեր և Վերինա կայսրուհւոյն, որ շատ ուրախացան այս լրոյս վերայ, և մեծապարգև մեծարեցին զկալբիոս և զկանդիդոս. և Վլաքեռնի ապարանից եկեղեցւոյն մէջ՝ մասնաւոր մատուռ մի շինելով՝ հոն տեղաւորեցին այս սուրբ հանդերձս։

Երբ 613ին խոսրով Պարսից թագաւորն սկսաւ Պօլսոյ վերայ յարձակ՝ տեսնելով որ Վլաքեռնի եկեղեցւոյն գանձն վտանգի մէջ է, որովհետև քաղքին արուարձաններէն միոյն մէջ լինելով՝ աւելի ենթակայ էր թշնամեաց աւարառութեանն, անոր համար փոխադրեցին զնոսա 'ի Սուրբն Սոփիա։ Յետոյ Ը դարուն վերջերը Մեծն Կարոլոս ընկալաւ այն պատմուճանն իւր Ակուիսկրանայի մատուռը դնելու համար. և Սուրբն Անկիլպերտ ալ նորա մի կտորն առաւ 800 և 814ին ամենեներն իր վանուցն համար 'ի Կենտուլն։ — Յետոյ կայսրն բոլոր աշխարհք պատգամաւորներ ղրկեց հրաւիրելով զամենայն ուղղափառս Ակուիսկրանա՝ յ13 յունիսի, «առ 'ի պատիւ սրբոյ Նշխարաց՝ որ հոն գտանէին, այսինքն ութ հատ փուչք 'ի պսակէ Յեսուն մերոյ, բևեռ մի սրբոյ խաչին, ճշմարիտ խաչին մի կտորն, վարշամակ Յեսուն մերոյ, պատմուճան Կուսին Մարիամու, խանձարուրք Յիսուսի Մանկան՝ որ 'ի մսրին, բազուկ Սիմէոնի Ծերունւոյ և այլ բազում Նշխարք»։ — Իսկ այս ժամանակէս 'ի վեր նոյն պատուական աւանդից վերայ շատ անգամ խօսած են Ակուիսկրանայի Տարեգիրքն և ժամանակագրութիւնք։

Տիրամոր վերափոխմանէն ետև՝ Մանուկ Յիսուսի խանձարուրին ուր մնալն ոչ գիտեմք. հաւանական է որ ծանօթ և բարեկամ ընտանիք մի գնոսա պահած էր անդին գանձու մի պէս։ Բայց Յիսուսի Քրիստոսի մահուանէն ետև՝

digitised by A.R.A.R.@

քրիստոնէից վերայ հատած սատիկ հալածանաց նայելով՝ կարեմք ասել թէ աստուածային նախախնամութեամբ էր որ փրկչին, իւր Մօրն, սրբոյն Յովսեփայ և Առաքելոց պատկանեալ նշխարքն ծածկելով անյայտացան առաջին դարերուն մէջ. ապա թէ ոչ այն արիւնահեղ հալածանաց ժամանակ՝ թշնամիք քրիստոնէութեան ամէն բան պիտի ապականէին և ջնջէին։ — Բայց երբ Մեծն Կոստանդիանոս 312ին Մաքսենտիոսի յաղթելով՝ քրիստոնէից պաշտպան հանդիսացաւ, և հալածանքը դադրեցուց, այլ այնուհետև պատճառ մի չկար ծածկելու զնշխարս պատկանաւորս փրկչին և Մօր նորա և սրբոց Առաքելոց. այլ և Կոստանդիանոսի Մօրն սրբուհւոյն Հեղինեայ ձեռքով ճշմարիտ խաչին գտանիին ալ՝ դրեթէ նախընթաց նշան մի եղև միւս նշխարաց գիւտին։

Դալով Մարուկ ցիստուսի խանձարոցն՝ ունեցած տեղեկութիւններս փոքր մի ուշ և յետոյ է ժամանակաւ։ Որմանք համարին թէ կայսրուհին Եւդոքսիա ընդունած լիցի զնոսա՝ յԵրուսաղէմ ճանապարհորդած ժամանակ յամի 445, և ղրկած 'ի Կոստանդնուպոլիս՝ ուր երիտասարդ Բուլքերիա կայսրուհին եկեղեցի մը շինել տուած լինելով 'ի պատիւ Կուսամօրն՝ հոն զետեղեցան։ Յովհաննէս — Ցակոբ Շիֆլէթ անուն մատենագիր մի ԺԷ դարուն մէջ՝ որ սուրբ Գերեզմանին նշխարաց վերայ գրած է, համարի թէ Եւդոքսիա ընդունած լիցի զխանձարուրս Քրիստոսի 'ի Յովեղնալէ (Յորդան) պատրիարքէ Երուսալեմի, որպ համար ասի թէ նաև սրբոյ կուսին գերեզմանն և նորա պատանքն ալ ղրկած է 'ի Կոստանդնուպոլիս։ — Յունաց եկեղեցին մասնաւոր տօն մի կատարէր խանձարրոց Քրիստոսի յ31 օգոստոսի, ինչպէս որ մեր յայտնաւորաց մէջ ալ յիշատակի 'ի նմին աւուր, և նոցա հետ նաև կուսամօր պատուական գօտւոյն տօնն։ Այս գօտիս հատ և մանր բրդեղէն նիւթով մի շինուած է, գոյնն մութ դեղին. և տեսոյն անդէն գուշակէ թէ աղքատ աղջկան մի եղած է։ Գերմանոս պատրիարքին խօսից նայելով՝ Սուրբ Կոյսն իւր ձեռքը հիւսած էր զայն. իսկ Ակուիսկրանայի մէջ աւանդութիւն կայ՝ իբրև թէ սրբոյն Յովսեփայ ճամբորդութեանն ծածկոցի մի թելերովն շինուած էր։ — Լիվերանի անուամբ քահանային 1854ին հրատարակած հին յիշատակարանաց նայելով՝ երևի թէ այս խանձարրոց մի մասն 'ի Հռոմ տարուեցաւ, և դրուեցաւ 'ի Սուրբ Մարիամ մարդոյ ասացեալ եկեղեցին՝ յաւուրս Թէոդորոս պապին, յամի 646 կամ 49. ուր պահի մինչև ցայժմ։ — իսկ յԱկուիսկրանա եղած խանձարրոց վաւերականութիւնն հաստատող առաջին պատճէնն է սրբոյն Դիոնեսիոսի ձեռագիրն՝ զոր արդէն յիշեցաք։ Բաց աստի՝ յիշատակին նաև 1192ին գրուած նշխարաց ցանկի մի մէջ, և Այբերիկ անուամբ միանձի մի ժամանակագրութեան մէջ, յորում յիշատակի նաև այն մեծ հրդեհն՝ որ քաղաքը մխիր դարձուց յամին 1236ին։ — Փիլիպպոս Մուսքէս անուամբ թատրական քերթողն ալ՝ որ ԺԳ դարուն սկիզբն էր, Կարոլոսի Ակուիսկրանայի մէջ հաւաքած նշխարաց վերայ խօսելով՝ յաւելու նոյն ժամանակի լեզուաւ Apries s'aporta la çainture dont li Fils Dieu, en noreture est estet estrains es biercuel s'el virent moult le gens alnet. որ թերևս այսպէս թարգմանելի է.

Յետոյ ածեալ եղև գօտին, իւ նորածին Աստուածորդին

Պլնդ պլնդեցաւ յորորոցին. Զոր և բազումք այնք տեսին։

Վարչական գլխատման Ս. Յովհաննու Կարապետին այն է՝ որով ըստ սովորութեան Հրէից՝ Սրբոյն գլուխն պլնդցին առ 'ի թաղել զնա։ Զևն ուղղակիւն է, կտաւն նրբանիւթ, տեղ տեղ խոշոր սրեան բծերով. ասոր համար է որ Ժողովրդեան ցոյց տուած ատեն՝ ծալքն ոչ բանան։ Բոլանդեանք՝ հին արաբական ձեռագիր մի յիշեն՝ յո-

digitised by A.R.A.R.@

բում՝ ասի թէ Հերովդէս իւր պալատան մէջ թաղած էր Յովհաննու Մկրտչի գլուխը. բայց իր մեռնելէն ետև պալատն կործանեցաւ և քարակոյտ մի եղև։ Շատ տարիներէ ետև՝ երկու ուխտաւորք գիշեր մի այն աւերակաց մէջ ապաւինելով հրեշտակ մի երևցաւ իրենց և ցոյց կարապետին գլխոյն տեղը, զոր առնելով իրենց երկիրը տարին։ Յոլովմենոս պատմագրին խօսից նայելով՝ չորրորդ դարուն երկրորդ կիսուն մէջ Սրբոյն Յովհաննու գլուխն գտնուեցաւ՝ մակեդոնեան հերձուածող միանձնաց քով, որ յառաջագոյն յերուսաղէմ բնակէին, և յետոյ 'ի Սիկիլիա փոխադրուեցան։ Երբ վաղէս կայսրն խմացաւ այս բանս՝ հրամեց որ 'ի Կոստանդնուպօլիս բերեն այն պատուական գանձն. բայց երբ կառքն՝ որոյ մէջ էր սուրբ գլուխն՝ հասաւ 'ի Պանտիքիոն (Բէնտիք) մերձ 'ի քաղաքեդոն, լծուած ջորիներն այլ աւելի յառաջ երթալ ոչ կամէին. կայսրն ալ հրաշք համարելով այս բանս՝ նոյն տեղը թողուց զսուրբ նշխարն։ — Բայց սակաւ մի յետոյ յամի 386 կայսրն Թէոդոս Մեծն ուխտի երթալով վերոյիշեալ գիւղը՝ հանդիսաւոր կերպով 'ի Կոստանդնուպօլիս փոխադրեց այն պատուական նշխարքը, մասնաւոր սրբարան մի շինելով իրենց համար։ Յետոյ այս պատուական գանձս ալ տրուեցաւ կարոլոսի, զոր դնել տուաւ 'ի մատրան Կուսամօրն։

Իսկ սուրբ պաստառն կամ Միջապատն զոր կրէր Քրիստոս խաչելութեան ժամանակ՝ մեծ կտոր լաթ մի է ճերմակ գունով՝ որ երևի թէ աւելի երկայն կտորէ մի պատռուած է. ձևն եռանկեան մօտ, որոյ վերայ արեան լայն բծեր երևին՝ որովք գրեթէ խխմբուած է. միայն ծայրերն որ կապուած էին՝ ճերմակ մնացած են։ — Սուրբ գրոց մէջ ամենևին յիշատակութիւն չկայ թէ Քրիստոս միջապատ մի կրէր 'ի խաչին, թէ և հին աւանդութիւնն զայն հաստատէ, և ցուցնէ թէ Յիսուս Քրիստոս բոլորովին մերկ չէր խաչին վերայ. և ամենէն հնագոյն խաչելութիւններն մէջքը լաթ մի կապած նկարուած են։ — Հիմա մնայ գիտել թէ ուր պահուէր այս միջնապատն Յակուիսկրանա բերուելէն յառաջ։ Ամենէն հին տեղեկութիւնն գտանեմք Նշխարատուփի մի վերայ՝ որոյ մէջ պահի յաղթող նշանն Կոստանդիանոս կայսեր, յորում ասի թէ բովանդակէ (մասն ինչ) 'ի պաստառէն որով սրբեաց Յիսուս Քրիստոս 'ի խաչին։ Այս նշխարատուփիս մէջ ուրիշ շատ նշխարներ ալ կային, ինչպէս 'ի փշեղէն պսակէն, 'ի սպունդէն, 'ի ծիրանոյն. ուստի հաւանական է որ երբ Մեծն կարոլոս ընկալաւ 'ի Կոստանդնուպօլսոյ զնշխարս ծննդեան և չարչարանաց Քրիստոսի՝ միջնապատն ալ միասեղ էր։ — Ակուիսկրանայի գանձուն ցանկին մէջ յամին 1192 այս խօսքով յիշատակի. 'ի զգեստուց Յեսուսն որովք խաչեցաւ։ Ալբերիկի Ժաւանիա կագրաց մէջ ընթեռնումք յամի 1236. այն կտաւն՝ որով սրբեաց էր Յիսուս Քրիստոս 'ի խաչին սրսկեալ արեամբ նորա։ Քորսէնտոնքի ասացեալ ձեռագրին մէջ ալ յիշատակի այսպէս. «Կարոլոս Մեծն ստացաւ իւր Ակուիսկրանայի մատրան համար այն զգեստն՝ զոր կրէր Քրիստոս 'ի վերայ խաչին, և որ նորա մէջքը պատէր»։

Այս հանգերձս թացեալ արեամբ Որդւոյն Աստուծոյ՝ զոր եհեղ վասն մարդկան, սրբազան և նուիրական է՝ բառիս բոլոր ուժովն առեալ։ Եւ թէպէտ իւր ծագումն բացարձակապէս ապացուցանելու կարող չենք, սակայն վերոյգրեալ նշմարքն բաւական են առաւել քան զառաւել ցուցանելու՝ որ ամենևին տարակոյս ոչ վերցնէ իւր հարազատ վաւերականութիւնն։

Յովսէփ Ռիզսել

digitised by A.R.A.R.@